# 49. ԱՄԸԼԸՄԸՉ ԿՆԻԿ

Կէլնի մե հա վազիր, մե հա լաճըմ:

Վազիր կասի. - Տղա՛, քյե փը փսակեմ, իմ սըռտի փափաք կատարեմ, եմ ժամանակ լյվեր ի:

Ասայ. - Բաբո՛, փյու կիտես:

Վազիրն էր, կան էկավ, մե հա խորոտ, խընազանդ ախչիկըմ կընդա̈վ, պըռնեյ փսակեյ վեր ուր լաճուն: Խարսնիսն արայ, խասույ մե մեկլու մըրազին:

Ավուր մեկ վազիր խարցնեյ ուր լաճույ. - Տղա՛, ի՞նչխ ի քյո կնիկ, խորոտ քյո սըռտո՞վն ի թե չէ:

- Շնորհակալ եմ քյո մոտեն, վազիր, աղեկ ի, քանձ իմ գյլոխ վերն ի:

Լաճ, ուր կնիկ են, շատ մե մեկելու ավնան, շատ մե մեկելու կսիրեն, էն կա̈նդար մե մեկելու կսիրեն, որ մեչ մեկ շապկի կքյնեն:

Թաքավորի խարս ուր իրկան ասայ. - Վազիրի լա՛ճ, մե պես էլ մեչ աշխըրին իրիկ-կնիկ կա՞, մե մեկելու կուզի, թե չէ մենքյ մենակ ենքյ:

Ասայ. - Ես ի՞նչ կիտեմ, կէլնի որ. կէլնի որ չկա, մենքյ մե մեկելու խավնիր ենքյ, կուզենքյ:

Ասայ. - Վազիրի լա՛ճ, արե մենքյ մեչ մե պայիման մ'անենքյ, որ ի'առճև ասպծու, որ ասփված վեր մե շա̈իադ էլնի: Թե որ ասփված չարած, փյու մեռար եմ ի'առաճ՝ ասփվորի վերեն էլ ես չմնամ, ես զի ըսպանեմ, մենքյ մեկ փապանի մեչ թաղվենքյ: Որ ես մեռնեմ, փյու էմ էլ ըսկուն անես, մենքյ մեյ փեղ էրթանքյ խորվենքյ:

Հ'էլավ լաճն էր, կնայ ուր դյուքյան պռնեյ, նստավ ուր առփուրին, ուր ալիշ-վերիշին: Ասփծու իրիկուն լաճ որ կէրթեր փուն, ալնախ ի'ըլին չարազ կանի, կառնի կպիրի: Հ'էվարին որ խայ կուտեն կխմեն, անուշքյաղցր զրոյ կանեն, չյուր քյնո̈յ գյախ, կէլնեն կէրթան որ քյնեն, էնոնց չարազ կպա̈նա̈ն, կնստեն կուտին, նոր կէլնեն կպառկեն, ուրենց քյեֆն կանեն:

Տարի մ'էրկու ըսկուն այուրումիշ կըլնի, ըսկուն մե մեկելու կսիրեն, սեր անոշ:

Ավուր մեկ վազիրի լաճ էնոր դյուքյան կկոծի, կէլնի փյուս, որ պիտի գյա, չարազ-պան առնելու, որ դյուքյան կիրիշկա կոծուկ ի, զա-չարազ չինե ծեռ, որ առնի պիրի:

Կասի. - Ջանըմ, ես էրթամ փուն, իմ կնիկ չասի՞, փյու էսօր ինչի՞ չալուզ չպիրիյիր: Բոշ ի, - կասի, - էրթամ հեռխկե մը միս առնեմ պիրեմ, փանեմ թող կնիկս անի քյաբաբ, գյինու խեփ խորոփ կէլնի:

Կառնի միս, կպիրի փուն: Կնիկ կվերուցի միս, էմ էլ կէրթան մո խեր, կուփեն կխմեն, չյուր հ'անյգան գյախ, վազիրի քյուն կփանի: Խարսն ի, վազիրի փեղ կթալի, վազիր կէլնի կպառկի կքյնի: Էնոնքյն էլ կէլնեն կէրթան ուրենց հէօդեն:

Կասի. - Կնիկ, էսօր հաքյի չարազ չէլավ, էլի էն միս պե անենքյ քյաբաբ, խեփ գյինուն ուփենքյ, խմենքյ:

Կնիկն ի, կէլնի վեր միս պիրելու, որ փըրթեն: Կնիկ զինք ուր-ուր մու կասի. «Ջանըմ, էսա եմ իրիկ, աջեբա սըոփանց ի զի կուզի՞, թե չէ՝ մու լեզվով ի, ես էսօր էնոր փը ջըռբեմ»:

Կըլնի միսն ի կառնի կպիրի կփնի վազիրի լաճու հ'առաճ, փանակ կպիրի, կուպա իրկան ծեռ, կասի. - Դե՛ ես պըռնեմ փյու փըրթի:

Վազիրի լաճն ի, կառնի փանակ միս փըրթելու: Կնիկ յավաշըմ ուր մափ մըսի փկանց կուփա փանկի առաճ, փանակ միս կկտրի կէրթա կփըպնի մափին, մափ կփորըմ կարնոփվի:

Կնիկ կբոռա. - Հե՜յ վախ, փյու իմ մափ կփրիյիր, ես մեռա:

Վազիրի լաճ կնգյան մափ կպըռնի, կիրիշկա վեր, գյեռ խա, կփրվեր ի: Կնիկն ի, սութ մեռնել կփնի վեր ուր, կպառկի գյեփին:

Իրիկն ասաց. - Հե՜յ վա՜խ, որ իմ կնիկ մեռավ, էլ եմ սաղ մնալ վեր ասփվորին ինչի՞ ի, քյանի որ ես ասփծու հ'առաճ կավլ եմ էկե, որ ես զի սպանեմ, մեյ փրա մե պափընքյին փանեն խորեն:

Էն կախ կամեն պափից կառնի փակ, կփնգյի գյեփին, ուր սիրտ կթալի վերեն, քյամկից կուփա փյուս: Կըռոց կինի վազիրի լաճուն: Կըռոց որ կինի վազիրի լաճուն, կնիկ, որ խելքյ կնայուկ էր, բիրդան կաքխի, կաքխի որ լաճ էնփեղ կմռա, կճռա, մկա կմեռնի, յան դեռըմ:

- Վազիրի լաճ, փյու ինչի՞ քյե կսպանես, քյու գյլխուն-արիվուն մեռնեմ, ես սաղ եմ:

- Հե՜յ, - կասի, - օռոսպի, փյու որ չիր մեռե, ինչի՞ ասիր՝ ես մեռա, փյու էլ եմ հ'իփն յան կըգյեր, գի կջըռբեր:

Կնիկն թըփավ վեր իրկան, պիտի կամեն քյաշեր փյուս, իրիշկաց որ իրիկն թըմըմիր էր, մեռիր էր:

Էլավ ինգյավ վեր իրկան, իլաց մըռմըռաց, գյոռաց չյուր առափուն, վազիրին խաբար չիփուր: Առափուն մութ լուսու ֆըռալեն, գըռալեն կնաց մեչ վազիրի հէօդին: Վազիր բիրդան հ'արթընցավ, որ խա՛, ուր խարս կուլա կմըռմըռա:

- Տո խարսնիկ, քյե ի՞նչ էլե:
- Ի՞նչ պիտի ըլնի, իմ աչքեր կուրցավ, քյո լաճ զինքյ ըսպանեց:
- Ջանըմ, - ասաց, - խարսե՛, եմ լաճ ինչի՞ զինքյ պիտի ըսպաներ:
- Չըմ կիտե, արե տիսի:
Էլավ վազիրն էր, աջալա վազեց տղի հէօղի մեչ: Կնաց տեսավ որ աղվորթ, լաճ գյետ կամեն զարկե սըռտին, քյամկից տվե տյուս: Ըլա՛, ինգյավ վեր լաճու ջանդկին, զյռռաց մըռմըռաց:
Վազիրն էր էլավ ջույար իտու ժամխըտներաց, տերտերներաց: Տերտերներն են, էկան տեսան որ աղվորթ, վազիրի լաճ զինքյ ըսպաներ ի: -
Վա՜զի՛ր, - ասին, - էսա ի՞նչ էլե լաճ մու ամեստեղ զինքյ ըսպանե:
Ախչկան խարցնին: Ախչիկն էր, տեղնուտեղ պատմեց. - Միս իպե, միս փըրթինքյ, եմ մատ կըտրավ, եմ խելքյն կնաց, չյուր ես աքխա, տեսա որ տղեն ուր թալեր էր վեր կա՜մին, սպաներ էր:
Էլան լաճու ջա՜նդակ տարան լվացին, պատընքյին, տարան խորիցին: Մեկ շա՜պաթ վերեն ընցավ, խարսն ասաց. «Ջանըմ, քյանի որ եմ իրիկ զի ա՜պով զինքյ ըսպանեց, պետք էր ես էլ զի սպանե, ամա չարի, բարեմ վազիրի ասեմ, քյեոլիկըմ տա շինիլ վեր լաճու գյերեզմընին, ես էրթամ դա ճքնեմ, չյուր օր մախուն, խնի իրես էլ պիտի չտիսնամ, չյուր ախըրի ես էլ մեռնեմ, զի խե ինոր կըշտին եմ'էլ խորեն»:
Խարսն էր էլավ կնա՜ց մեչ դիվանխանին, թամա՜նդեմ' էլավ վազիրին:
Վազիրն ասաց. - Աստված խերն անի, ախչիկ, թե որ կուզես իրիկ անել՝ ես քյո ծեռ պըռնող չեմ, կնա՛, քյո խայց խալալ ըլնի:
- Չէ, վա՜զիր, - կասի, - էլ զի խարամ ի կայե իրիկնութեն:
- Ապա ի՞նչ ի քյո ուզածն, ասա՛, քյո ի՞նչն ի պակաս, որ էկար կայնար ըստեղ:
Ասաց. - Վա՜զի՛ր, քյեզնե ոըջեմ մը կանեմ, քյեոլիկըմ տաս շինել քյու լաճու գյերեզմընի վերեն, որ ես էրթա՜մ մտնեմ էնտեղ, վեր քյո լաճուն նստեմ, ճքնեմ, չյուր մինչե օր մախուն, մարթու իրես չտիսնամ, չյուր ես մեռնեմ, զիկ էլ էնոր կշտի խետ խորեքյ:
Վա՜զիրն ասաց. - Քյո ուզածն թող էն էլնի:
Էլա՜վ խորոտ քյեոլիկըմ իտու շինել: Խարսն էր, կնա՜ց գյետ նստավ վեր ուր իրկան գյերեզմընին: Օրական էրկու-իրեքյ դա՜ն խաց-ճյուր կտանեն, ուր կրակ-ճրագյ տարեր են դա՜, էն մնաց ըսկուն մեչ ուր խալին:
Ավուր մեկն չար մարթըմ կնա՜ց մեչ էտա գյեղին, պըռնվավ նեռքադար: Հ'էվարնեց գյեղի կողպլոր կֆոա: Ավուր մեկն ի, իրիշկաց որ մեչ խաչերաց ճրագյըմ էրեվաց: Էկավ մեչ գյեղին, գյեղի ջահելքյերաց մոտեն խարցնեց. - Ջահելնե՛ր, - ասաց, - ես ծե մոտեն պա՜ մը խարցնեմ. էն ի՞նչ ճրագյի լոս ի կվառվե մեչ ծեր խաչերաց, քյանի էրթա՜մ էն դեխ հա ճրաքյի լոս կերևա:
Ասիցին. - Էն մեր վա՜զիրի տղի գյերեզման ի, մեր վազիրի լաճ որ

մեռեր ի, վազիրի խարս էլավ քյեոլիկըմ շինեց վեր ուր իրկան գյերեզմընին, կճքնի:

Մեչ ուր մտքին ասաց. «Կայնի, ես էն կնիկ տը ջըռբեմ, հեմ էն սըռտա՞նց ի, թե մու սութմանց ի»:

Էլավ փաթըմ գյեղի պիլոր ֆռաց, կնաց չկարե մը էն դեխ շինից, էլավ չկարեն պըռնեց ծեռ, կնաց վազիրի [տղի]գյերեզմընի մոտ, տյուռ թըփեց:

Վազիրի խարս նիրսանց բոռաց, ասաց. - Վո՞վ ես:

Ասաց. - Ես եմ, տյուռ պաց մե հատ, ես եմ, չկարեն կըպուցեմ:

Ասաց. - Էսա տեղ չկարի կրակ չկա. կնա՛ մեչ գյեղին կրակ էլ, ճրաքյ էլ կա, քյո չկարեն կպու:

Ասաց. - Ջանը՛մ, տյուռ պաց, ես չկարեն կըպուցեմ, ես գյեղի նեռբադարն եմ, ես թաժա եմ իկե էլե նեռբադար մեչ էսա գյեղին: Վազիր զի թամխեր ի, որ եմ լաճու գյերեզմընի վերեն կճքնի, կախու մը տիր աչքի:

Շատ լավա կինի, կուգյա տյուռ կպանա, կասի. - Արե քյո չկարեն կպու:

Չկարեն կկըպուցի, կէլնի որ էրթա տյուս, վազիրի խարս կասի. - Դե կնա՛, ես տյուռ կշինեմ:

- Վա՛զիրի խա՛րս, ես քյեզնից պա մը տը խարցնեմ:

- Ի՞նչ կասես, ի՞նչ տը խարցնես:

Կասի. - Վազիրի խա՛րս, տյու ինչի՞ ես նստե ըստեղ:

Կասի. - Ես նստիր եմ վեր եմ էրկան գյերեզմընին, ճքնեմ՝ չյուր մեռնեմ:

Կասի. - Աստված քյո տուն ավիրի, մեռնողի իտն իսկի էլ մարթ մեռե՞ր ի, որ քյո ջահել ջան չյուրաթմիշ կանես:

- Հե՛յ, - կասի, - նեռբադա՛ր, ես տիրըմ խոսք տվիր եմ, էլ չըմ կանա եմ թյուքյ լիզե: Մկա էլ որ էսա տեղից էլնեմ տյուս, հա՛ր քյաշ պիտի զի թըքյի-մըրի, զի տ'ասեն. վա՛զիրի լաճու գյլոխ ի՞նչ իխան, մեր գյլոխն էլ ըսկուն տը խանի: Ես էլ առիր եմ եմ հալ, սըթըրվիր եմ էսա տեղ, տը մնամ էսա տեղ, չյուր մեռնեմ:

Նեռբա՛դար կասի. - Աստված քյո տուն ավեր չանի, քյո սիրտ որ իրիկ անել կուզի, ես գյեռ հա՛զըր եմ, քյե կառնեմ: Էսա տեղն էլ չեմ նստե, քյե կառնեմ կէրթա՛մ հ'յուրուշ երկիր, գյեղրանքյ, որ մարթ չկիտնա:

Ասելուն պես վա՛զիրի խարսի քոթըք իրար կառնի, կասի. - Ես քյե կառնեմ:

Խոսք կտան մե մեկելու, կըպըռծնեն:

Նեռբադարն կասի. - Վա՛զիրի խա՛րս, քյո տուն ավեր չանի, ջանդակըմ պերած կախած են մա՛րքյաձի տյուռ, էրթա՛մ աչքեմ հեմ դա՛ ջի, թե դա՛ չի, նոր գյամ քյե առնեմ տանեմ:

Կէլնի նեռբադարն ի, կէրթա մեչ գյեղին կֆռա, մահանա կանի ջանդկին, կտառնա կէրթա՛ մո վա՛զիրի խարս:

Մտավ ներս, ասաց. - Աստված քյո տուն ավիրի՛, վա՜զիրի խարս, եմ տուն ավիրավ կնայ:
Ասաց. - Ընչի՞, ներո՜դար, ի՞նչ էլե:
Ասաց. - Առավուտն մայան զի տը տանեն, կախեն:
- Ջանը՛մ, - ասաց, - ընչի՞, ասա՛:
Ասաց. - Ի՞նչ ասեմ, էն ջանդակ ինչ չասիցի՞ մարքյազի տյուռ կախած են, կնայի իրիշկայի՝ էն ջա՜նդակ մու տարեր են:
- Է՛, - ասաց, - ջա՜նդակ տարեր են, ինչի՞ մառա՜խ կանես:
Ասաց. - Ապա ի՞նչ անեմ, վա՜զիրի խարս:
Ասաց. - Գյեռ ըսկը եմ իրկան ջա՜նդակ խա՛ն, տար կախի էն տեղ, թը առավուտն էլնեն տիսնան էնոնց ջանդակ:
Ասաց. - Վոլա, տողանին եմ ծեռ-ոտ պըռնեց, ես չեմ կանա քյակե խանե, չեմ էլ կիտի ո՞ր տեղն ի, ո՞ր տեղ չի:
Ասաց. - Քյաշվի դեն, ես խանեմ տյուս:
Լաճն էր, քյաշվավ, կնիկն առեց փետատ, իրկան ջա՜նդակ էխան իթալ դա, ասաց. - Դե առ, կնա կախի դա, արե զիկ առ տա՛ր:
Ներքա՜դարն ասաց. - Քյո տուն ավեր չանի, էն ջա՜նդակ որ էնտեղ կախուկ էր, գլոխն խետ չէր, ոտքերն ու ծեռներն էլ խետ չէր, մու չլուտ ջա՜նդակն էր:
- Է՛, - ասաց, - տանակ չկա՞ խե քյե, խա՛ն, գլոխ, ոտքյեր, ծեռքյեր կտրի տա՛ր:
Ներքա՜դարն ասաց կնգյան. - Վալա, եմ մոտ տանակ կա, ամա եմ ծեռ չպըռնե ես գլոխ կտրեմ, տողանին զի պըռներ ի:
- Էտա ոռո՞վ տյու ներքադա՜րութեն կանես, տա՜նակ տու զի, զի թաիլիֆ արա, ես ինչխ ի քյո ջանդակ՝ ըսկուն կտրեմ:
Ասաց. - Էնոր վիզն կտրի:
Վիզն կտրեց:
Ասաց. - Ծեռքյեր էրմընգյից կտրի: Ոտքյեր ծըյվերաց կտրի:
Կնիկ ոտքյեր, ծեռքյեր էնոր ասածին պես կտրեց:
Ներքա՜դարն ասաց. - Վոլա, եմ ջանդակ գյեռ էտասնա յի:
Ասաց. - Դե առ, կնա՛:
Ներքա՜դարն ասաց. - Տյու ա՜դվորթն տողրի ասա՛, էսա ջանդակն քյո ի՞նչն ի:
Ասաց. - Վալա, էսա իմ իրիկն էր, խալալ իմ ծոց քյնողն էր:
Ասաց. - Հայ օռոսպի դել, որ էսա քյո իրիկն էր ըսնա՜ փրթիցիր, էն վա՜զիրի լաճ մ՚էր, ապա վա՜ղ ես ներադար մ՚եմ, որ էլնեմ քյո իրիկ, եմ գլոխն էլ ըռընա՜ տը խանես:
Ծեռ իթալ, կնգյա վիզ ծալեց, իպե գյետին, իրես արաց դեխ կուրլեն, վիզ կտրեց, ծեռքյեր կտրեց, ոտքյեր կտրեց, ինչխ որ էն ուր իրկան արաց, ներքա՜դարն էլ կնգյա ջա՜նդակ ըսկուն արաց:
Ներքա՜դարն էն տեղեն էլավ, իթող կնաց մեչ գյեղին: Կնաց ջյուար իտուր վա՜զիրին. - Վազի՛ր, կնա՜, քյո լաճու ջանդակ խանած են տյուս:

- Ջանը՛մ, - ասայ, - եմ լաճ ես խորեր եմ, եմ խարս գյեո դա՛կ, վեր եմ լաճու գյերեզմընին կճքնի, էտա ի՞նչ խաբա՛ր ի փյու փվեյիր զիկ:

- Չէ, - ասայ, - կնա՛ փիսի:

Վազիրն էր, էլավ կնա՛յ, փեսավ գյեո խա՛, լաճու ջանդակ փրթած լյած մեչ քյեոլկին, կնգյան էլ խեփ:

Տա՛ույավ եփ էկավ: Էկավ նեոբա՛դա՛րին ասայ. - Էսա վո՞վ էր ըննա՛ արա՛յ:

- Վա՛զիր, - ասայ, - ի՞նչ պախեմ քյեզնիյ, ասփծույ, ե՛ս եմ արե:

- Է՛, նեոբա՛դա՛ր, փյու ինչի՞ արիյիր:

- Խա՛, - ասայ, - ես ուզիյի քյո խարս ջըոբել, էն իխան ուր իրկան, քյո լաճու գյլոխ, ոփքյեր, ծեոներ եմ հ՚ա՛ռա՛ճ փրթեյ, ես էլ ա՛ֆքյարիյ քյո խարսի վիզն էլ ես կփրիյի:

Պափմութեն մեկի-մեկիկ նեոբա՛դա՛ր վա՛զիրին կաա կանի:

Վազիր նեոբա՛դա՛րի ճակափ կպաքյի, ա՛ֆա՛րե՛մ կասի:

Լաճու ջա՛նդակ ու խարսին էմ էլ կխորի, ճեոկ-ճեոկ փեղ:

Նեոբա՛դա՛ր կանի ուր խոզյու զավակ: Մեյ խափ քյամիլ ա՛ւլի, ախչիկըմ կկընդնի, կպիրի կփսակի վեր նեոբադարին:

Յոթ օր, յոթ կիշեր խարսնիս կանի. էնոնքյ կխասնեն էնոնց մըրազին, փյուքյ էլ խասնեքյ ծեր մըրազին:

Երկնույ իրեքյ խնձոր կինի. մեկն ասողին, մեկ լսողին, մեկն էլ գյիր անողին:

Էնոնքյ ուրենց փեղ անոշ, փյուքյ ծեր փեղ անոշ:

